Նաիրի ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 9-ին Երևանում:

Կրթությունը՝

1993-1998թթ. — Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի Թյուրքագիտության բաժին,

1999թ. — Թաֆթս համալսարանի Իրավունքի և դիվանագիտության Ֆլեթչեր դպրոցի Դիվանագիտական վերապատրաստման ծրագիր,

2003թ. — Պաշտպանության ՆԱՏՕ-ի քոլեջի Ավագ պաշտոնյաների դասընթաց:

Աշխատանքային գործունեությունը՝

1997-1998թթ. — ԱԳՆ Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Թուրքիայի բաժնի ռեֆերենտ,

1998-2000թթ. — ԱԳՆ Հասարակայնության հետ հարաբերությունների վարչության Լրատվամիջոցների հետ կապի բաժնի կցորդ, ապա՝ երրորդ քարտուղար,

2000-2001թթ. — ԱԳՆ ԱՊՀ վարչության Կովկասի բաժնի երրորդ քարտուղար,

2001-2003թթ. — ԱԳՆ Ամերիկայի վարչության ԱՄՆ և Կանադայի բաժնի վարիչ,

2003-2004թթ. — ԱԳՆ Հասարակայնության հետ հարաբերությունների վարչության Լրատվամիջոցների հետ կապի բաժնի վարիչ

2004-2007թթ. — ԵԱՀԿ-ում ՀՀ մշտական պատվիրակության երկրորդ քարտուղար և մշտական ներկայացուցչի տեղակալ (Վիեննա),

2007-2008թթ. — ԵԱՀԿ կանոնադրային մարմինների քարտուղար և քարտուղարության Համաժողովների ծառայության Հանդիպումների կազմակերպման բաժնի վարիչ,

2009-2010թթ. — Ազգային ժողովի նախագահի մամուլի խոսնակ,

2010-2018թթ. — ՀՀ նախագահի ռեֆերենտ,

2018-2019թթ. — ՀՀ կառավարության աշխատակազմ՝ ՀՀ 3-րդ պաշտոնաթող նախագահի գրասենյակի ղեկավար,

2019-2022թթ. — Շվեյցարիայում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար և ՄԱԿ Ժնևի գրասենյակում և այլ միջազգային կազմակերպություններում ՀՀ մշտական ներկայացուցչի տեղակալ,

2023-2024թթ. — ՀՀ ԱԳՆ քարտուղարության խորհրդական:

Մի շարք գիտական հոդվածների հեղինակ է:

Դիվանագիտական աստիճանը՝
Արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար:

Պետական պարգևներ՝
Երախտագիտության մեդալ (2016թ.):

Օտար լեզուներ՝
ռուսերեն, անգլերեն, թուրքերեն:

Ընտանեկան կարգավիճակը՝
Ամուսնացած է, ունի մեկ դուստր:

2024թ. հունվարի 8-ին նշանակվել է Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ (նստավայրը՝ Ստամբուլ):